ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Նաիրի համայնքի Զովունի գյուղի փողոցների անվանակոչության մասին
որոշման նախագծի

Որոշման ընդունումը բխում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջից, համաձայն որի համայնքի ավագանին որոշում է կայացնում համայնքային նշանակության փողոցների, թաղամասերի, պողոտաների, հրապարակների, զբոսայգիների անվանման և վերանվանման վերաբերյալ: Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունը՝ Նաիրի համայնքի Զովունի բնակավայրում քաղաքացիների սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխվել է բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասերի, որի արդյուքում կառուցապատման հետևանքով առաջացել են նոր փողոցներ: Ներկայացված որոշման նախագծով առաջարկվում է անվանակոչել Զովունի գյուղի վերոնշյալ փողոցները:

Աշխատակազմի քաղաքաշինության բաժնի պետ՝ Բ. Բեգլարյան

ՏԵՂԵԿԱՆՔ

Նաիրի համայնքի Զովունի գյուղի փողոցների անվանակոչության մասին
որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Նաիրի համայնքի բյուջեում
ծախսերի էական ավելացման կամ նվազեցման մասին

Նաիրի համայնքի Զովունի գյուղի փողոցների անվանակոչության մասին որոշման ընդունումը Նաիրի համայնքի 2023 թվականի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի ենթադրում:

Ֆինանսական բաժնի պետ՝ Ս. Նիկողոսյան